

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն

ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում  
հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների  
վերազինման աշխատանքների /ջրագծի կառուցում/

<<ՀԵՐՏ>> ՍՊԸ տնօրեն

Հ. Հակոբյան

Կատարող՝ <<Յուլի Դալի>> ՍՊԸ տնօրեն

Լ. Փաշինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն .....3

1.2 Հապավումներ .....3.

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....4

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) ..... 7

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր .....7

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը.....10

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում .....16

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ.....16

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ .....17

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա .....19

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....21

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ 7

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ՝ .....51

4 4, ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ..... 54

5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄԵՂՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....55

6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ..... 66

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....74

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 76

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	Հ. Պետրոսյան
1.3 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ ք. Երևան, Նոյ թաղամաս, 119
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղ

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՄՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԱԶ՝ Անհատ Ձեռնարկատեր

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է վերազինել /ջրագծի կառուցում/ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրը և մենատնային քոթեջները:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների վերազինման /ջրագծի կառուցում/ աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

## Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. ՀՀ անտառային օրենսգիրք

17. ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի N1404-Ն որոշումը:

18. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների>> օրենքը,

19. ՀՀ կառավարության 2014թ հուլիսի 31-ի 781-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2010թ 71-Ն որոշում,

21. ՀՀ կառավարության 2010թ 72-Ն որոշում,

22. ՀՀ կառավարության 14,08,2009թ 967-Ն որոշում,

23. ՀՀ կառավարության 08.02.2018թ 108-Ն որոշումը:

24. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը 23,11,1999թ,

25. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը 03,04,2000թ:

**1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր**

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է պատվիրատու Հ. Հակոբյանի պատվերի, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հ.հ 18032021-06-0046, 18032021-06-0047, 18032021-06-0051, 1803202-106-0056 վկայականների՝ տրված 2021թ մարտի 18-ին, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների կառուցման նախատեսվող գործունեությունը անցել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և 21,07,2021թ ստացել է դրական ԲՓ 0131-21 եզրակացություն:

Համաձայն տրված եզրակացության, տրամադրումից հետո, տարածքը պարիսպապատվել է, անցկացվել է շուրջ 2.3կիլոմետր գազատար, անցկացվել է շուրջ 1.7կմ երկարության 10000կվա հզորությամբ էլ. սնուցման գիծ: Տեղադրվել և շահագործման է հանձնվել 630կվա հզորությամբ ենթակայան: Այս պահին կատարվում է 11 առանձնատների կառուցման աշխատանք:

Նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների վերազինման աշխատանքների /ջրագծի կառուցում/, կառուցել խմելու-կենցաղային ջրագիծ՝ Փ90 պոլիէթիլային խողովակներով՝ ստորգետնյա եղանակով: Ջրագիծն անցնելու է համայնքային սեփականություն հանդիսացող և անտառային հողատեսքերով: Ջրագծի երկարությունը կազմում է 2407,58մ, ընդհանուր քանդման մակերեսը կկազմի 1203,79խմ, որից անտառային հողերով անցնող մասի երկարությունը 1560մ, այն անցնում է ճանապարհի երկայնքով:

Ժամանակավոր ճանապարհների կառուցում նախատեսված չէ, օգտագործվելու է առկա գոյություն ունեցող անտառմիջյան ճանապարհները:

Ջրագիծը սկիզբ է առնելու <<անանուն>> աղբյուրից, որը գտնվում է Գյուլագարակ գյուղից


հարավ, ձորակի հունի հետևյալ կոորդինատներում՝  $X=40^{\circ} 55' 11.1''$   $Y= 44^{\circ} 28' 40.6''$  1584մ բարձրության վրա:

Կառուցվող տեղամասում անհրաժեշտ է խրամուղու 3-4-րդ կարգի գրունտների փորում, ավազով նախաշերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, բնահողի հետլիցք տոփանումով: Աղբյուրի վրա նախատեսվում է կառուցել կապտաժ, թաց և չոր հորերով:

Նախատեսվում է դատարկման հորերի ու օդահան հորերի կառուցում, Մարիչ հորի կառուցում:

Ստորև ներկայացվում է Ջրագծի ուղեծիրը բեկվող կետերի համարակալմամբ՝





Ջրագծի կորդինատները՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կորդինատային համակարգով,

1	4531866.44	8456032.81	54.62
2	4531910.16	8456000.07	40.96
3	4531947.04	8455982.26	20.18
4	4531963.43	8455970.49	92.28
5	4532051.80	8455943.91	44956
6	4532081.77	8455942.42	45164

7	4532102.96	8455927.21	12328
8	4532113.28	8455927.65	15888
9	4532120.69	8455927.05	13697
10	4532128.04	8455926.63	31.69
11	4532159.68	8455924.84	13.47
12	4532173.13	8455924.09	15.73
13	4532187.02	8455916.71	41760
14	4532191.56	8455914.29	15.71
15	4532200.89	8455901.65	35.60
16	4532235.88	8455895.04	22068
17	4532242.36	8455893.82	22.74
18	4532264.26	8455887.67	15.25
19	4532277.72	8455880.50	28369
20	4532286.37	8455875.96	19.83
21	4532303.93	8455866.74	22.43
22	4532325.44	8455860.36	20972
23	4532331.32	8455857.43	46.37
24	4532376.62	8455847.51	30.92
25	4532406.72	8455840.42	34274
26	4532417.09	8455834.53	29.20
27	4532445.17	8455826.54	42.45
28	4532486.75	8455817.93	29190
29	4532498.99	8455814.25	45275
30	4532511.88	8455806.35	101.52
31	4532597.35	8455751.56	44835
32	4532605.55	8455745.46	13.54
33	4532615.13	8455735.89	37.38
34	4532638.53	8455706.74	22.15
35	4532657.89	8455695.98	51.33
36	4532708.38	8455686.69	28.40
37	4532733.88	8455674.18	31.71
38	4532757.27	8455652.77	15.55
39	4532762.40	8455638.09	13.19
40	4532762.23	8455624.90	14.45
41	4532762.04	8455610.45	18.18
42	4532763.08	8455592.31	46143
43	4532764.47	8455587.23	13547
44	4532765.09	8455584.95	28672
45	4532772.11	8455581.59	24716
46	4532780.82	8455577.41	45171
47	4532782.91	8455577.47	12966
48	4532790.25	8455577.67	16681
49	4532799.70	8455577.94	23102
50	4532804.32	8455578.06	47.10
51	4532851.40	8455579.38	30.29
52	4532879.50	8455568.05	25.18
53	4532904.06	8455562.52	28.62
54	4532930.97	8455552.77	34669

55	4532943.13	8455548.36	35.08
56	4532976.11	8455536.41	74.41
57	4533048.80	8455520.54	54.34
58	4533100.62	8455504.16	46.50
59	4533146.72	8455498.13	33.48
60	4533179.57	8455491.68	34943
61	4533189.47	8455490.70	44963
62	4533195.46	8455490.10	44966
63	4533204.44	8455489.21	26.20
64	4533230.35	8455485.33	61.55
65	4533290.35	8455471.66	71.07
66	4533360.81	8455462.42	22.76
67	4533383.38	8455459.46	27.41
68	4533410.68	8455456.95	39.93
69	4533450.60	8455458.00	45.60
70	4533495.65	8455465.04	141.72
71	4533636.70	8455451.24	20.17
72	4533656.86	8455450.63	26.38
73	4533682.14	8455458.17	45087
74	4533692.06	8455459.83	44942
75	4533704.85	8455450.21	14.30
76	4533712.24	8455437.97	56.31
77	4533741.45	8455389.83	36.10
78	4533756.11	8455356.84	47.44
79	4533767.38	8455310.75	59.27
80	4533806.17	8455265.94	15.21
81	4533814.39	8455253.14	15.81
82	4533821.78	8455239.16	73.32
83	4533838.56	8455167.78	63.37
84	4533857.95	8455107.45	0

Տեղադրվող բոլոր սարքավորումներն ու ձևավոր մասերը անհրաժեշտ է նախատեսել PN 10Ճնշման դասին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի /որը կմշակվի ՇՄԱԳ գործընթացից հետո/՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված, տարածաշրջանին բնորոշ ծառերի և թփերի օգտագործմամբ: Օգտագործվելու է տարածքի առկա հողային ռեսուրսները, նոր բուսահող չի բերվելու:

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագծերի մշակման ընթացքում ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան նախատեսվելու են անհրաժեշտ

միջոցառումներ:

Մույն նախագծում բոլոր տեխնիկական միջոցառումները մշակված են ՀՀ տարածքում գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերին համապատասխան:


Ստորև ներկայացվում է իրադրային հատակագիծը՝




Ստորև ներկայացվում է գլխավոր հատակագիծը՝ կոորդինատներով


**< Ջերտ> ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի, Գյուլաքարակ համայնքի Գարգառ գյուղում  
հյուրանոցային համալիրի և մենաստանային քոթեջների վերազինման  
աշխատանքների / ջրագծի կառուցում/ գլխավոր հատակագիծ  
Մ 1:5000**

Կոորդինատային համակարգ՝ ARM WGS 84









Տարածքը գրունտային ճանապարհով միացված է միջհամայնքային ասֆալտապատ ճանապարհին: Գրունտային ճանապարհի երկարությունը մինչև ներկայացվող հողամաս կազմում է 700 մ:

Հողամասի արևելյան և հարավային կողմերից 50 –60 մ հեռավորության վրա ձգվում են անտառաշերտեր, իսկ դեպի հարավ-արևելք՝ 750 – 1000 մ հեռավորության վրա գտնվում է «Գյուլագարակ» պետական արգելավայրը:

Գարգառ գյուղի մոտակա բնակելի տներից հողամասը գտնվում է 2.2 կմ հեռավորության վրա, Գյուլագարակ գյուղից՝ 1.9 կմ:

---

### **Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ**

Նախատեսվող համալիրը բաղկացած է լինելու /4 մեկ և երկու հարկանի առանձնատներից և 5 հարկանի հյուրանոցից: Համալիրում նաև նախատեսված են.

- Փոքր ֆուտբոլի դաշտ,
- Մեծ թենիսի կորտ,
- Զվարճանքնի կենտրոն
- Առևտրի սրահ:

---

Բոլոր ներքին ճանապարհները, ավտոկայանատեղիները և հարթակները ծածկված են լինելու գեոցանց – մանր խիճ համակարգով:

Տարածքի սահմանազատումը շրջակայքից լինելու է դեկորատիվ բնույթի՝ սյուներով և ժապավենով:

Ասֆալտապատ ճանապարհից դեպի հողամաս տանող գրունտային ճանապարհը երկու գծով սալապատվելու է տուֆի սալերով, արանքներն՝ խճով:

Նախատեսվում է ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում կառուցել խմելու-կենցաղային ջրագիծ՝ Փ90 պոլիէթիլային խողովակներով՝ ստորգետնյա եղանակով: Ջրագիծն անցնելու է համայնքային սեփականություն հանդիսացող և անտառային հողատեսքերով: Ջրագծի երկարությունը կազմում է 2407,58մ, որից պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերով անցնող մասի երկարությունը 1560մ, այն անցնում է ճանապարհի երկայնքով:

Ջրագիծը սկիզբ է առնելու <<անանուն>> աղբյուրից, որը գտնվում է Գյուլագարակ գյուղից հարավ, ձորակի հունի հետևյալ կոորդինատներում՝ X=40° 55' 11.1" Y= 44° 28' 40.6" 1584մ



բարձրության վրա:

Կառուցվող տեղամասում անհրաժեշտ է խրամուղու 3-4-րդ կարգի գրունտների փորում, ավազով նախաշերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, բնահողի հետլիցք տոփանումով: Աղբյուրի վրա նախատեսվում է կառուցել կապտաժ, թաց և չոր հորերով:

Նախատեսվում է դատարկման հորերի ու օդահան հորերի կառուցում, Մարիչ հորի կառուցում:



Ջրագծի կառուցումը տևելու է ընդամենը 10 օր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է /Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի)/ պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4, մոտ 18կգ /յուրաքանչյուր օր մոտ 2կգ /10x2=20կգ/:

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը աշխատողները կտեղափոխեն տարածքում առկա աղբամաններ:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ջ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

$n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 14 մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 10 օր

$$W_{\text{խ.տ.}} = (0.016 + 14 \times 0.025) \times 10 = 3.66 \text{ խմ/շին. ժամ.}:$$

- b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

$S_1$  – ջրվող տարածքի մակերեսը, մոտ 1447քմ,

$K_1$  – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 10

$$U_1 = 1447 \times 0.0015 \times 10 = 21,705 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի / 21,705+3,66/ 25,365 խմ/շին. ժամ:

Կառուցվող ջրագծի ջրամատակարարումը՝ տեխնիկական ջուրը, իրականացվելու է ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

Խմելու ջուրը կլինի բերովի՝ տարաներով, հաշվի առնելով աշխատաօրերի

սակավ թիվը՝ 10օր:

Տեխնիկական ջուրը կտեղափոխվի կամազ մակնիշի ավտոմեքենայի վրա տեղադրված ավտոցիստեռնով:

### **Կանաչապատում և բարեկարգում**

Գործունեության իրականացման արդյունքում ծառափայլին բուսականության հատում չի նախատեսվում, կենդանատեսակների բնադրավայրեր առկա չեն, քանի որ այժմ էլ տարածքում իրականացվում են շինարարական աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի /որը կմշակվի ԾՄԱԳ գործընթացից հետո/՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված, տարածաշրջանին բնորոշ ծառերի և թփերի օգտագործմամբ: Օգտագործվելու է տարածքի առկա հողային ռեսուրսները, նոր բուսահող չի բերվելու:

### **Ջրամատակարարման համակարգ**

Նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների վերազինման աշխատանքների /ջրագծի կառուցում/, կառուցել խմելու-կենցաղային ջրագիծ՝ Փ90 պոլիէթիլային խողովակներով՝ ստորգետնյա եղանակով:

Ջրագիծը սկիզբ է առնելու <<անանուն>> աղբյուրից, որը գտնվում է Գյուլագարակ գյուղից հարավ, ձորակի հունի հետևյալ կոորդինատներում՝ X=40° 55' 11.1'' Y= 44° 28' 40.6'' 1584մ բարձրության վրա: Նախատեսվում է <<անանուն>> աղբյուրից օգտվելու համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ՀՀ օրենսդրությամբ ստանալ Ջրօգտագործման Թույլտվություն:

Կառուցվող տեղամասում անհրաժեշտ է խրամուղու 3-4-րդ կարգի գրունտների փորում, ավագով նախաշերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, բնահողի հետլիցք տոփանումով: Աղբյուրի վրա նախատեսվում է կառուցել կապտած, թաց և չոր հորերով:

Նախատեսվում է դատարկման հորերի ու օդահան հորերի կառուցում, Մարիչ հորի կառուցում:

Տեղադրվող բոլոր սարքավորումներն ու ձևավոր մասերը անհրաժեշտ է նախատեսել PN 10Ճնշման դասին համապատասխան:

### **Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց**

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85\* մաս II, հետևյալ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

### **- Նախատեսվող աշխատանքների կազմակերպում**

Նախատեսել անվտանգությունը և կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով և ցանկապատի երկայնքով տեղադրել լուսավորություն:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Կապտածի, քաջ ու չոր հորեղի կառուցման  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՈՒ ԴԵՏԱԼՆԵՐԻ ԱՍՍԱԿԻՐ

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՅԱՆ ՄԻՉԱՌԻՐ	ՔԱՄԿ	ՔԱՇԸ ԿԳ
1	2	3	4	5
1	III ԿԱՐԳԻ ԳՐՈՒՆՏԻ ՄՇԱԿՈՒՄ ՉԵՌՁՈՎ ԿՈՂԱՅՄԱՍՔ	Մ <sup>3</sup>	5.2	
2	IV ԿԱՐԳԻ ԳՐՈՒՆՏԻ ՄՇԱԿՈՒՄ ՉԵՌՁՈՎ ԿՈՂԱՅՄԱՍՔ	Մ <sup>3</sup>	8.3	
3	ԽՃԻ ԼՆԱՍՇԵՐՏԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ 100 մմ ՀԱՍ ՏՈՓՍՆՈՒՄՈՎ	Մ <sup>2</sup>	5.0	
4	ՉՐԱԴԱՎԱՔ ՊԱՏԻ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-12.5 ՔԵՏՈՆՈՎ	Մ <sup>2</sup>	0.65	
5	ՉՐԱԴԱՎԱՔ ՊԱՏԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 6 ՔԵՏՈՆՈՎ	Մ <sup>2</sup>	0.8	
6	ԽՈՂՈՎԱԿ Փ 76 X 3.0 L = 350մմ	ՀԱՏ	1.0	1.9
7	- 250 X 250 X 4	ՀԱՏ	1.0	2.0
8	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ՀԻՄԱՏԱԿԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 4 ՔԵՏՈՆՈՎ	Մ <sup>2</sup>	0.7	
9	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 4 ՔԵՏՈՆՈՎ	Մ <sup>2</sup>	2.05	
11	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԾԱԾԿԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 4 ՔԵՏՈՆՈՎ	Մ <sup>2</sup>	0.34	
12	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԾԱԾԿԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՈՒՄ Փ10 AIII L = 1350մմ	ՀԱՏ	16	13.4
13	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԾԱԾԿԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՈՒՄ Փ8 AI L = 2350մմ	ՀԱՏ	9.0	8.4
14	ՉՐԱՎԱՔ ՊԱՏԻ, ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԱՐՑԱՔԻՆ ՍԱՏԻ ԲԻՑՈՒՄՊԱՏՈՒՄ	Մ <sup>2</sup>	22	
15	ԲԱԳՈՒԻ ԴԵՏԻՑՔ	Մ <sup>2</sup>	4.34	
16	ԱՎԵԼՈՐԻ ԲԱԳՈՒԻ ՓՈՌՈՄ ՏԵՂՈՄ	Մ <sup>2</sup>	8.9	
17	ԿԱՎԵ ՓԱԿԱՆՔԻ ԱՏԵՂԾՈՒՄ H = 200մմ	Մ <sup>2</sup>	0.35	
18	ԽՃԻ ՖԻԼՏՐՈՂ ՇԵՐՏԻ ԱՏԵՂԾՈՒՄ H = 200մմ	Մ <sup>2</sup>	0.35	
19	ԿՈՊԻՃԻ ՖԻԼՏՐՈՂ ՇԵՐՏԻ ԱՏԵՂԾՈՒՄ H = 100մմ	Մ <sup>2</sup>	0.7	
20	ՀՈՂԵ ԾԱԾԿՈՒՅԹ H = 150մմ	Մ <sup>2</sup>	0.26	
21	ԹՄԲԱՊԱՏԱՆ ԱՄՐԱՑՈՒՄ ՃԱՐԱՊԱՏՈՒՄ H = 150մմ	Մ <sup>2</sup>	0.26	

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՅԱՆ ՄԻՉԱՌԻՐ	ՔԱՄԿ	ՔԱՇԸ ԿԳ
1	2	3	4	5
1	ՊԱՅՄԱՎԱՆ ԵՎ ԳԵՐԼՑՄԱՆ ԽՈՂՈՎԱԿ Փ50 L = 4.0 մ	ԽԱՏ	1	16.0
2	ՀԱՍՏՈՒՄԻՉ ԿԱՑՈՒՅՐ ԱՎԵՆՈՒԿԱՅԻՆ ՑԻՐԵՐԻ ՀԵՌԱՅՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇՐԻ ԿԵՂՅՈՒՄ Փ50	ԽԱՏ	1	
3	ՊՈՂՊԱՏԵ ԱՌԻՄԱԿ Փ100	ԽԱՏ	1	
4	ՊՈՂՊԱՏԵ ԱՌԻՄԱԿ Փ50	ԽԱՏ	1	
5	ՊՈՂՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՍՏՈՐ Փ108 L = 400մմ	ԽԱՏ	1	4.1
6	ՊՈՂՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՍՏՈՐ Փ50 L = 400մմ	ԽԱՏ	1	1.6
7	ՊՈՂՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՍՏՈՐ Փ50 L = 900մմ	ԽԱՏ	1	3.6
8	ՊՈՂՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՍՏՈՐ Փ50 L = 250մմ	ԽԱՏ	1	1.0
9	ԱՐՏՈՒՂՈՒՄ Փ50 / ՊԱՏԻՓՈՒՆ ԱՆՈՒՄ Փ 108 / 90	ԽԱՏ	2	1
10	ՊՈՂՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՍՏՈՐ Փ50 L = 500մմ	ԽԱՏ	1	2.0
11	ՄԵՏԱՐԱԿԱՆ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՅՈՂԱՆԵՐԿՈՒՄ 2 ԱՎԱՍ	մ <sup>2</sup>	2.5	
12	ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ ԿԱՐԿԱՍԵՐԾՈՒՄՈՎ	մ	2.50	
13	ԽՈՂՈՎԱԿ ԼՈՐՍԱԼ ՀԱՍՎԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՈՒՄ ԲԻՑՈՒՄԻ ԱՆՇԻԿՈՎ Փ50 մմ	գ.մ.	4.0	
14	ՀԻՂՈՒՄԵՎՈՒՄԻՉ ՇԵՐՏ 2 ՇԵՐՏ ՈՌԻԵՐՈՅԻՉ ՏԱՔ ԱՍՍԻԿԱՅԻ ՎՐԱ	մ <sup>2</sup>	11.5	
15	ՊՈՂՊԱՏԵ ԿՑԱՇՈՒՐՑ Փ108	ԽԱՏ	2	
16	ՊՈՂՊԱՏԵ ԿՑԱՇՈՒՐՑ Փ50	ԽԱՏ	4	

ՏՐՈՒՄԸ	ԹՈՂԱՐՅԱՆ	ՍՄԱՐՏԱՆ	ՊԼ Լուսն ճաղից հրկայապարակ համայնքի հատկառ քննակազմի փոխակազմ տարածքում ջրազգի կառուցման աշխատանքային նախագիծ
ՋՕԵՑ	ԱՄԱՌՆԱ	ՋՕԵՑ	Տրամադրանքային
ԱՅՈՒԳԵՑ	ԱՄԱՌՆԱ	ԱՅՈՒԳԵՑ	ԱՆ ԱՆ 9 - 19 24
			ՔՎԷ ԼՆԱՍԱԳԻԾՆԱՊԸ



**Անհրաժեշտ հիմնական  
շին. մեքենաներ, մեխանիզմներ եվ  
սարքավորումներ**

ԴԻՐՔ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ
1	Գազաեռակցող ազրեզատ	1 հատ
2	Էլեկտրաեռակցող ազրեզատ	1 հատ
3	Ավտոբետոնախառնիչ	1 հատ
4	Ինքնաքափ ավտոմեքենա	2 հատ
5	Էքսկավատոր	1 հատ
6	Ջրի մեքենա	1 հատ
7	Տոփանիչ	1 հատ
8	Պոլիէթիլեն խողովակների մոնտաժման սարք	1 հատ

**- Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման  
վերաբերյալ**

Կազմակերպչա-տեխնոլոգիական սխեմաներ բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտներն ու նախագծի տեխնիկական պայմանները: օբյեկտի շինարարությունը ըստ ԿՊՊ 3.01.01-85-ի (շինարարության կազմակերպման)

1. Նախապատրաստական փուլ
2. Հողային աշխատանքներ իրականացում
3. Հիմնական փուլ


1. Նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները  
.. գեոդեզիական նշահարում

Շինարարության կենսապահովման ցանցերի տեղադրման աշխատանքները իրականացնել համաձայն շահագործող կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանների: Շինհրապարակը համալրվում է հակահրդեհային սարքավորումներով, լուսարձակներով: Շինարարական աշխատանքները իրականացնել կապալառուի կողմից աշխատանքների կատարման նախագիծը կազմելուց հետո, որտեղ ըստ ԿՊՊ 111-4-80-ի պահանջների պետք է նշվեն անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման ցուցմունքները նշված պայմաններում աշխատելու ժամանակ:

Հողային եվ հիմքերի պատրաստման աշխատանքներ հողային և հիմքերի պատրաստման աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային նախագծի և ԿՊՊ 111-4-80 «հողային



շինվածքներ եվ հիմքեր»-ի:



**- Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ**

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ

ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է մեքենայացման բազայում:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս Գյուլագարակ քաղաքում գործող լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Կենցաղային և շին աղբը ժամանակավոր յուրաքանչյուր օր նախատեսվում է կուտակել տարածքի արևելյան հատվածում և պարբերաբար հեռացնել Գյուլագարակ համայնքի կողմից հատկացված վայր, իսկ հողաբուսաշերտը տեղադրել անմիջապես ջրագծի հարակից տարածքում և յուրաքանչյուր ավարտված տարածքում հետլիցք իրականացնել:

**2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Տեղանքը լեռնոտ է՝ Բազումի լեռնաշղթայի ստորոտում գտնվելու պատճառով:

Բազումի լեռնաշղթան պատկանում է Փոքր Կովկասի Վիրահայոց-Ղարաբաղի լեռնահամակարգի (միաթեք աստիճանաձև բեկորային զոնա) ներքին լեռնաշղթաների թվին և 66կմ երկարությամբ ձգվում է Սեպասարի սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթան ունի 2800մ միջին, 2992մ (Ուրասար) առավելագույն բարձրություն:

Բազումի հորստ-կամարածալքը համապատասխանում է երկրաբանական կառուցվածքին, դրան բնորոշ են համաչափ ուռուցիկ աստիճանաձև լանջեր: Տարածքի կառուցվածքային ռելիեֆին բնորոշ են երկրորդական կարգի կամարածալքային (Ուրասարի, Չքնաղի), գմբեթաձև (Մայմեխի), գոգածալքային կամ ճկվածքային (Գարգառի), գրաբեն-գոգածալքային (Դիլիջանի) կառուցվածքներ:

Տեղամասը հիմնականում բաղկացած է հրաբխածին, ենթահրաբխածին նստվածքային առաջացումներից ներկայացված պորֆիրիտների, տուֆաբրիկչաներով և նրանց տուֆերով: Հանքարփակող ապարները հիմնականում ներկայացված են հիդրոթերմալ փոփոխված

ապարներով՝ քվարց-սերիցիտներով՝ քվարց-սերիցիտ քրոմային մետասոմատիտներով և երկրորդական քվարցիտներով:

Տեկտոնական տեսակետից շրջանն ունի բավական բարդ երկրաբանական կառուցվածք, որը պայմանավորված է դրա տեղադիրքով Փոքր Կովկասի մեզանտիկլինորիումի Սևան-Ամասիայի տեկտոնական գոտու հյուսիս-արևմտյան մասում՝ Կապան-Գոգարանի կիմերեյան ծալքավորության զոնայում:

Սևան-Ամասիայի տեկտոնական գոտին բնութագրվում է ինտենսիվ, որոշ տեղերում հավասարաթեք և հովհարաձև ծալքավորությամբ՝ բարդացված վերնետվածքներով և վարնետվածքներով:

Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ, առավելագույն հորիզոնական արագացումները 0,3g:

**Տարածքի սեյսմիկ բնութագիրը**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀԾՆ II-20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max}=0.4g$  արագացմամբ համաձայն՝ ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգավոր գոտիավորման քարտեզի, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ: աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր «կառույցներով»:

## Ռելիեֆը

Գյուլագարակի տարածաշրջանի ռելիեֆը չափավոր զառիթափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով: Դիտվում է թույլ գծային էրոզիա:  
Մակերևութային գերակշռող թեքությունները՝ 20 – 30

## - ԿԼԻՄԱՆ

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011

«Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և ներկայացվել է Ստեփանավան քաղաքի համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Հայաստանի տարածքն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների մեծ բազմազանությամբ: Համաձայն Հայաստանի ագրոկլիմայական տեղեկագրի՝ Ստեփանավանի անտառտնտեսության տարածքը հիմնականում վերագրվում է 7-րդ ագրոկլիմայական գոտուն՝ չափավոր ցուրտ, ԾՄԲ 900մ-ից բարձր: Անտառի տարածման վերին գոտում կլիմայական պայմանները համեմատաբար խիստ են:

Ստեփանավանի անտառտնտեսությունում կլիմայական պայմանները խիստ տարբերվում են՝ կախած ծովի մակարդակից ունեցած բարձրությունից և տարբեր դիրքադրությունների վրա անտառների տեղաբաշխումից:

Տարածաշրջանն առանձնանում է բարեխառն կլիմայով՝ զով, խոնավ ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով: Մինչև 1300-1400 մետր բացարձակ բարձրությունների վրա կլիման չափավոր տաք է, 1600–1700մ բարձրությունների վրա չափավոր ցուրտ, իսկ մինչև 2100մ բարձրություններում գերիշխում է ցուրտ կլիմայական գոտին:

Առավելագույն դրական և բացասական ջերմաստիճանները դիտվում է հուլիս-օգոստոս ամիսներին՝ +32°, դեկտեմբերին -16°: Գերիշխում են հյուսիսային և հյուսիս-արևմտյան քամիները: Ընդհանուր առմամբ, Ստեփանավանի անտառտնտեսության տարածքում կլիմայական պայմանները բարենպաստ են ասեղնատերևավոր և լայնատերևավոր շատ տեսակների անտառաճման համար:

Կլիմայական բարենպաստ պայմանները հնարավորություն են ընձեռնել տարածաշրջանում ստեղծելու առողջարանային և հանգստի լայն ցանց:

**Կլիմայական բնութագրերը ըստ Ստեփանավանի օդերևութաբանական կայանի տվյալների**

⊕ Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անունը	Բարձրություն մետրերով	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակաբացարձակ, °C	Բացարձակաբացարձակ, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ստեփանավան	1397	-3,6	-2,8	0,6	6,7	11,3	14,2	17,1	16,8	13,3	8,2	3,1	-1,8	6,9	-31	37

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անունը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին ամսական ժամը 15-ին ամենացուրտ ամսվա, %	Միջին ամսական ժամը 15-ին ամենաշոգամսվա, %
	ըստ ամիսների														
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ստեփանավան	67	69	71	70	76	78	76	76	75	76	72	69	73	56	58

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անունը	միջին ամսական տեղումները, մմ												Ձնածածկույթ			
	Տեղումների քանակը, մմ												Առավելագույն սառածությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	ըստ ամիսների															
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ստեփանավան	20	31	39	69	119	125	75	57	49	46	36	22	688	63	73	147
	36	54	29	36	103	55	53	51	41	36	32	35	103			
Վայք	25	28	36	57	63	45	23	21	15	36	31	31	411	65	51	
	22	20	23	36	30	32	34	39	23	29	37	27	39			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անունը	Միջին տարեկան մթնոլորտային ձնածածկույթը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների									Անհողմուքի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիների (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում	
			Միջին արագությունը, մ/վ														
			Հյուսիս-արևմտյան (ՀԱ)	Հյուսիս-արևելյան (ՀԱՆԱ)	Արևմտյան (ԱՐ)	Հարավ-արևելյան (ՀԱՎԱ)	Հարավ (ՀԱ)	Հարավ-արևմտյան (ՀԱՎԱՐՄ)	Արևմտյան (ԱՐՄ)	Հյուսիս-արևմտյան (ՀԱՆԱՐՄ)	Հյուսիս (ՀԱ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ստեփանավան	861,0	հունվար	2	3	8	7	7	37	30	6	49	2,8	1,8	21	2	3	0
			2,0	1,3	1,5	2,0	3,0	3,9	2,8	2,2							
			2	3	11	10	6	25	34	9							
			2,2	1,4	1,6	1,9	2,2	3,1	2,6	2,2							
			2	3	13	10	4	19	39	10							
հուլիս	1,5	1,1	1,4	1,4	1,4	1,6	1,8	1,5	61	1,1							
	2	3	12	10	5	24	37	7									
	1,7	1,3	1,4	1,4	1,6	2,2	2,2	2,0									
հոկտեմբեր	2	3	12	10	5	24	37	7	59	1,3							
	1,7	1,3	1,4	1,4	1,6	2,2	2,2	2,0									

Անտառներ

Տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (Fagus

orientalis), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառեջ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Սրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տխլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սգնու տարբեր տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հասապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառեջ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (դաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Աբեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpos*) և սրաթեփուկ կամ զարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրաճ (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

«Դիլիջան» ազգային պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական

(*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փոշնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառագուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)- (1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ- հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետնայինը (*Poa pratensis*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոզնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբավածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Իլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրագոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշի (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

## Օդային ավազան

Հանրապետության տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Սակայն Ստեփանավանի մշտական (ստացիոնար) տարածքում դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվություն կենտրոնի պաշտոնական կայքում ներկայացված չէ:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով մշակվել է «ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկը: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են. փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup> և ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

***Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց***




**Տվյալների ամփոփում**

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Սրարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Զարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և զեոնամերձ




օգոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2022 թվականին 2021 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում հիմնականում բարձրացել է ազոտի երկօքսիդի պարունակությունը:


Ստորև ներկայացվում է մթնոլորտային օդում որոշված կյուբերի կոնցենտրացիա- ներն՝ ըստ քաղաքների



Գծապատկեր 1. Մթնոլորտային օդում ՍՁԿ-ի պարունակությունը քաղաքներում 2022 թվականին



Գծապատկեր 2. Ազոտի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2022 թվականին



\*-Հրազդան և Արարատ քաղաքներում ՄՁԿ-ն 0.1 մգ/մ³ է

Գծապատկեր 3. Փոշու պարունակությունը քաղաքներում 2022 թվականին

2022 թվականին Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ,

Ծաղկաձոր քաղաքների փոշում որոշված մետաղներից նիկելի, մոլիբդենի և կոբալտի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, մնացած մետաղների համար ՍԹԿ-ները բացակայում են:

### Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 24 դիտակետ և 3 դիտակայան:


2022 թվականին Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան աննշան գերազանցել է ՍԹԿ-ն ( $0.1538 \text{ մգ/մ}^3$ , ՍԹԿ= $0.15 \text{ մգ/մ}^3$ ), իսկ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 36%-ում դիտվել է փոշու, 12%-ում՝ ծծմբի երկօքսիդի գերազանցում համապատասխան ՍԹԿ-ներից:

Լախորդ տարվա համեմատությամբ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան նվազել է 48%-ով, փոշու կոնցենտրացիան՝ 6%-ով, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ աճել 18%-ով:


2022թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտի աղտոտող 3 նյութերի) միջինն ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 1.18 է (փոշի՝ 1.03, ծծմբի երկօքսիդ՝ 0.08, ազոտի երկօքսիդ՝ 0.08):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների նվազման տեղեկաց:


Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրը արդյունաբերությունն է:




Գծապատկեր 12. Վանաձորի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 13. Վանաձորի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 14. Վանաձորի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





### Ջրային ռեսուրսներ

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի 26.5%-ը գնահատվել է 2-րդ դասի («լավ» որակի), 40.8%-ը գնահատվել է 3-րդ դասի («միջակ» որակի), 11.2%-ը գնահատվել է 4-րդ դասի («անբավարար» որակի) և 21.4%-ը գնահատվել է 5-րդ դասի («վատ» որակի):

Ուսումնասիրվող տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Դեբետ գետի ավազանին, որը զբաղեցնում է 4080,0կմ<sup>2</sup> տարածք, որից 3790,0կմ<sup>2</sup> Հայաստանի տարածքում:

Ստեփանավանի անտառտնտեսության տարածքում ամենամեծ գետը Ձորագետն է՝ Դեբեդի վտակը, որի վտակներն են՝ Տաշիրը, Հովնաձորը, Ուռուտը և Չքնաղը: Ձորագետը սկիզբ է առնում Ջավախքի լեռնաշղթայից և, հոսելով Լոռվա հրաբխային սարավանդով, առաջացնում է մոտ 80-100մ խորության կանիոն: Գետի երկարությունը 67,0կմ է, ավազանը՝ 1461,0կմ<sup>2</sup>, տարեկան հոսքը

մոտ 531,0միլ.մ<sup>3</sup>, ջրի ծախսը մոտ 43,0մ<sup>3</sup>, հոսքի գործակիցը՝ 0,48: Գետի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սնումը խառն է, կատարվում է անձրևաջրերի, ձնհալքի և ստորերկրյա ջրերի հաշվին, ընդ որում 53%-ը ձնհալից և անձրևաջրերից, 47%-ը ստորգետնյա ջրերից: Ջրային տրանսպորտի համար պիտանի չէ: Ձորագետից սկիզբ է առնում Լոռվա ջրանցքը, գետի վրա է կառուցված Ձորագետ ՀԷԿ-ը: Տարածքը հարուստ է սառնորակ աղբյուրներով:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

Հայցվող տարածքում առհասարակ բացակայում են ջրային ռեսուրսները, Փամբակ գետը ջրագծից գտնվում է մոտ 10 կմ հեռավորության վրա, իսկ Ձորագետը՝ մոտ 6,7 կմ:

### **ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը**

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):




## ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին




Գծապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



Գծապատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.

ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Աղյուսակ 1. ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
1	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ գյ. Խնկոյանից վերև
2	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Սպիտակից ներքև
3	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	1 կմ ք. Վանաձորից վերև
4	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Վանաձորից ներքև
5	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև
6	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Այրումից վերև
7	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	Սահմանի մոտ
8	Չորագետ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև
10	Չորագետ	Հյուսիսային	Լոռի	Գետաբերան

Գետերի ջրի որակը 2022 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գյ. Խնկոյանից վերև (1)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ
		1 կմ ք. Վանաձորից վերև (3)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ԿՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	ԹԿՊ5, նիտրատ իոն, մոլիբդեն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ԿՆ	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	
	Դեբեդ	0.5 կմ Մարց գետի թափման կետից ներքև (5)	Մանգան, ԿՆ	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն	5-րդ	
		0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Պղինձ, ԿՆ	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
		Սահմանի մոտ (7)	Պղինձ, ԿՆ	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
	Չորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (10)	-	2-րդ	2-րդ

**Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք**

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև գնահատվել է




«վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով: Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:


Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Գծապատկեր 4. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 5. Ղերեղ գետում մոլիբդենի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 6. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիայի փոփոխությունը

*ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական*



**Բուսական և կենդանական աշխարհ**

Ստեփանավանի տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտարհետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևութից բարձրությամբ:

Հյուսիսային Հայաստանի անտառային ֆլորան հիմնականում ներկայացված է Կովկասյան և Բորեալ ֆլորաների տարրերից:

«Ստեփանավանի» տարածքում հանդիպում են անոթավոր բույսերին 62 ընտանիքին 142 ցեղին պատկանող 389 տեսակ, որոնցից 6 տեսակ ընդգրկված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում:

«Ստեփանավանի» տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց օգտագործվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների՝

տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (102 տեսակ), մեղրատու (150), դեղատու (144), կերային (102) նշանակության տեսակները:

Ստեփանավանի տարածքը ըստ անտառաձման պայմանների մտնում է Լոռվա սարահարթի չափավոր խոնավ շրջանի մեջ, ընդգրկում է սարահարթի մեջ մտնող Ձորագետի աջափնյակը, ինչպես նաև նախկին Ստեփանավանի շրջանի լեռնային հատվածը:

Գյուլագարակի անտառապետությունում է գտնվում բնական սոճուտի տարածքը, որի հարևանությամբ գտնվում է Ստեփանավանի սոճուտներ դենդրոպարկը՝ 35,0001հա զբաղեցնող տարածքով:

Անտառկազմող գլխավոր ծառատեսակներն են արևելյան հաճարին, արևելյան կաղնին, կովկասյան բոխին, կովկասյան սոճին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են լորենին, հացին, կեչին, սրատերև թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառուտների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր ոչ մեծ ծառուտներ:

Միջին լեռնային գոտում հյուսիսային կողմնադրության լանջերը հիմնականում զբաղեցնում են հաճարկուտները, հարավային լանջերը՝ կաղնու համակեցությունները: Հաճարկուտներում անտառի կազմի մեջ մտնում են բոխին, կաղնին, լորին, հացին:

Թփերից հիմնականում հանդիպում են սզնին, մոռին, մասրենին, հազվադեպ՝ իլենին, մոշին, հոնին: Անտառի միջին և բարձրադիր գոտիներում հաճախ հանդիպում են անտառային տանձենի և խնձորենի:

Բացատներում և անտառի ենթանտառում թփերից հանդիպում են ցախակեռաս, մասրենի, զկռենի, կտտկենի:

1400մ-ից բարձր, մինչև անտառի տարածման վերին սահմանի հարավային լեռնալանջերը հիմնականում զբաղեցնում են խոշորառեջ կաղնու ծառուտները: Կաղնու անտառներին բնորոշ է խառը կազմ՝ բոխու, հացու, թխկու, լորենու, անտառային խնձորենու և տանձենու մասնակցությամբ:

Գյուլագարակի անտառապետության կազմում է գտնվում բնական սոճու ծառուտների պահպանության նպատակով դեռևս 1958թ. 2864հա-ի վրա ստեղծված «Գյուլագարակի» պետական արգելավայրը:

Կենդանական աշխարհը ներկայացված է Կովկասյան լայնատերև անտառներին բնորոշ տեսակներով: Տարածքի կենդանական աշխարհի բազմազանությանն ու հարստությանը նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, բնական քարանձավների առկայությունը,

անտառները և ջրերի առատությունը:

### Անողնաշարավորներ

#### Սողուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Սողեսներ (Lacertilia) – 12 տեսակ.
- Օձեր (Serpentes) – 6 տեսակ.
- Կրիաներ (Testudines) - 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

#### Կաթնասուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (Insectivora) – 9 տեսակ.
- Կրծողներ (Rodenti) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (Logomorpha) – 1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (Chiroptera) – 7 տեսակ.
- Գիշատիչներ (Carnivora) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (Artiodactyla) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 6-ը՝ Եվրոպական լայնական ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և անտառային կատուն:

### **Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները**

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ չեն ներառում:

Ջրագծի կառուցման շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման,

հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է անմիջապես ջրագծի հարակից տարածքը և ավարտելուց անմիջապես հետո իրականացվելու է հետլիցք,
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում՝ համաձայն կանաչապատման նախագծի:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 130 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

### **Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ**

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ միջատների բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ: Այլ կենդանիներ կառուցապատման ենթակա տարածքում չկան :

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենախնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

### **- Հողերի նկարագիրը**

Տարածաշրջանի հողերի հիմնական տիպերն են՝ սևահող կրազերծված կարբոնատազուրկ: Հողառաջացնող ապարները լճա-այլուվիալ, լճային և լճա-ֆլյուվիոգլյիալ: Հանդիպում են նաև գորշ անտառային հողեր, որոնք իրենց ամբողջ պրոֆիլում ունեն գորշ դարչնագույն գունավորում, ծագումնաբանական հորիզոնների թույլ տարբերակում, ընկուզանման կամ ընկուզակնձկային ստրուկտուրա: Հումուսի բաղադրությունում ֆուլվոթթուները գերակշռում են հումինաթթուներին: Ռեակցիան չեզոք է կամ թույլ թթվային, կլանման տարողությունը բարձր:

Անմիջապես Գյուլագարակի շրջանին բնորոշ են լեռնային սևահողերը: Սևահողերը ձևավորվել են կրաքարերի, պորֆիրիտների տուֆոբրեկչիաների հողմահարված նյութերի,

Սևահողերի բնորոշ առանձնահատկություններից է հողաշերտի համեմատաբար մեծ հզորությունը, ծագումնաբանական հորիզոնների ցայտուն արտահայտությունն ու դրանց աստիճանական անցումը:

Սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում:

Ընդհանուր առմամբ այս հողերը հարուստ են ազոտով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Սակայն դրանք թույլ և միջին չափով են ապահովված ազոտի և ֆոսֆորական թթվի մատչելի ձևերով:

Հումուսի մեծ պարունակությունը պայմանավորում է սևահողերի բարձր կլանողունակությունը՝ մինչև 45 – 55 մգ էկվ 100 գ հողում: Բարձր է նաև հողերի կենսաբանական ակտիվությունը: Մեծ քանակության ստորին կարգի միկրոօրգանիզմները բավականին ակտիվ դեր են խաղում սննդատարրերի հավաքման գործընթացում:

Կապված ջրաջերմային ռեժիմի, ռելիեֆի, մայրական ապարների և հողագոյացման այլ պայմանների հետ՝ հանդիպող սևահողերը ներկայացված են 3 ենթատիպով՝ կրազերծված, տիպիկ և սովորական:

Շինարարական աշխատանքների տարածքում բերրի հողաշերտի հզորությունը տատանվում է 30 – 90|սմ, հիմնականում՝ 40 սմ:

Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն: Ջրագծի կառուցման հայցվող տարածքում բերրի հողաշերտի հզորությունը կազմում է մոտ 40սմ:

### Աղմուկի մակարդակ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն տեխնիկան, սակայն, քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, և շինարարության ժամկետները ժամանակավոր բնույթ են կրում, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակում

#### ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը

Ընկալիչ	Ժամերը	dBLAEQ	dBLAMAX
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	06:00-22:00	55	70
	22:00-06:00	45	60

Ջրագծի կառուցման աշխատանքների ընթացքում օգտագործվող տեխնիկան շահագործելիս առաջանում է աղմուկ: Աշխատանքային հրապարակում առաջացող աղմուկի նվազեցման նպատակով մեքենաները պետք է սարքավորված լինեն ձայնախլացուցիչներով:

### Աղմուկ, թրթռում

Ջրագծի կառուցման աշխատանքների տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝

- տեխնիկան

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում է Գարգառ բնակավայրը, որը գտնվում է զգալի հեռավորության վրա:

Տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը LAէկվ սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = LAէկվ - ΔLAհեռ - ΔLAէկր - ΔLAկանաչ

Որտեղ՝

ΔLAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=79դԲԱ

ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

ΔLAհեռ 500մ-ի վրա կազմում է 28դԲԱ

ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով:

ΔLAէկր =14դԲԱ հանքի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

LAկանաչ-աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLAկանաչ=0դԲԱ  
Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝ LAտար =LAէկվ- LAտար =LAէկվ-ΔLAհեռ-ΔLAէկր-ΔLAկանաչ=79-28-14=37դԲԱ

Աղմուկի մակարդակը գիշերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում և կազմում է 32դԲԱ (նորման 35դԲԱ):

Հաշվի առնելով աշխատող մեխանիզմների տեսակները, աշխատանքների բնույթը, հեռավորությունը մոտակա բնակավայրից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը և թրթռումների մակարդակը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից շատ ցածր:

**Պատմության և մշակույթի հուշանձաններ**  
**ՀՀ Լոռու մարզի բնության հուշարձանների ցանկ**  
**Համաձայն ՀՀ կառավարության 967-Ն որոշման**

**Երկրաբանական հուշարձաններ**

28. «Անանուն» զոլավոր դայկաներ	Լոռու մարզ, Լալվար գետի կիրճ
29. «Անանուն» դայկաների համակարգ	Լոռու մարզ, Գարգառ գյուղից 5 կմ հվ, Պուշկինի լեռնանցքի մոտ
30. «Գետնագաղա» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռիբերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40մ բարձրության վրա

**Զրագրական հուշարձաններ**

6. «Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
-------------------	---

**Կենսաբանական հուշարձաններ**

5. «Մրտավարդ կովկասյան»	Լոռու մարզ, Պուշկինի լեռնանցք
-------------------------	-------------------------------

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 25 հուշարձան (15 միավոր):



հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Գերեզմանոց	13-15 դդ.	գյուղից 3 կմ հվ-ամ
Գերեզմանոց	13-19 դդ.	գյուղից 3 կմ հս-աե
Գերեզմանոց	15-20 դդ.	գյուղի հս կողմում, Ստեփանավան տանող ճանապարհի ձախ եզրին
Գերեզմանոց	13-19 դդ.	գյուղի մեջ
Գերեզմանոց	11-14 դդ.	գյուղի աե եզրին
Կոթող	11-14 դդ.	գյուղի աե եզրին
Գյուղատեղի «Տորմակաղուտ»	6 դ.	գյուղից 2 կմ հվ, բարձրավանդակի հս մասում
Գերեզմանոց	6-17 դդ.	եկեղեցուց աե
<a href="#">Եկեղեցի «Տորմակ»</a>	5-6 դդ.	գյուղատեղիում
Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հզ	գյուղից 2 կմ հվ
Եկեղեցի	7 դ.	գյուղի հվ-ամ կողմում
<a href="#">Եկեղեցի</a>	1874 թ.	գյուղի մեջ
Գերեզմանոց	17-19 դդ.	եկեղեցու շուրջ
Զանգակատուն	1817-20 թթ.	եկեղեցուն կից
Եկեղեցի Սբ. Գևորգ	4-5 դդ.	գյուղի ամ կողմում
Գերեզմանոց	13-19 դդ.	եկեղեցու շուրջ
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար Արցախյան ազատամարտում զոհված ՆԳ աշխատակիցներին	2002 թ.	ՆԳ բաժանմունքի շենքի մոտ
Հուշակոթող՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1973 թ.	գյուղի մեջ
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին («Ժամի աղբյուր»)	1949 թ.	գյուղի մեջ
Հուշարձան Արցախում զոհված ազատամարտիկներին	1990-ական թթ.	գյուղի մեջ
Ձիթհան	19 դ.	
Մատուռ Սբ. Գևորգ	4-5 դդ.	գյուղից 2 կմ ամ
Գերեզմանոց	13-19 դդ.	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	12-13 դդ.	

**3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ. ԱՌԱՋԱՑՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ**

Արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում շինարարական նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի վնասակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում:

Շինարարական աշխատանքների իրականացման փուլի ընդհանուր տևողությունը կկազմի առավելագույնը 10 օր:

- **Մթնոլորտային արտանետումներ**

**ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը**

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն :

$$Q = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times 106 \times B \times P6) / 3600 \text{ տ/ժամ, որտեղ (1)}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0.05

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.2

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

G վերամշակվող գրունտի քանակը, 2231,1մ<sup>3</sup> : Հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի ժամանակացույցի կազմում է 10օր,

$$4 \text{ օր/ամիս} \times 8 \text{ ժամ/օր} = 32 \text{ ժամ/շին}$$

$$G - 2231,1 \text{ մ}^3 : 32 \text{ ժամ} = 69,72 \text{ մ}^3 / \text{շին. ժամ կամ հաշվի առնելով տեսակարար կշիռը } 69,72 \text{ մ}^3 / \text{ժամ} \times 2.7 \text{ տ/մ}^3 = 188,25 \text{ տ/շին. ժամ}$$

$$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.2 \times 0.5 \times 188,25 \times 10^6 \times 0.6 \times 1.0) / 3600 = 0.087 \text{ գ/վրկ}$$

$$0.087 \text{ գ/վրկ} \times 32 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1000000 = 0.01 \text{ տ/շին. ժամանակահատված}$$

**գ) Դիզվառեղիքի հետ կապված արտանետումները**

Մթնոլորտային օդը աղտոտվում է ծանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված <<Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման>> մեթոդական հրահանգի հիման վրա: Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները (բացառությամբ ծծմբային անհիդրիդի) բերված են ստորև:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Աղյուսակ 6.

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO <sub>x</sub>	CH	ՑOU	CO	N <sub>2</sub> O	CO <sub>2</sub>	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև աղյուսակ 7-ում:

**Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները**

Աղյուսակ 7.

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքը	տեխնիկական վիճակը
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NO <sub>x</sub>	1.0	1.0
	CO <sub>2</sub>	1.0	1.0
	N <sub>2</sub> O	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), ազոտի օքսիդների (NO<sub>x</sub>) գործակիցները վերցված են <<Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից>> (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (N<sub>2</sub>O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Ընդամենը շինարարության ընթացքում շահագործվելու են 6 հատ տեխնիկական միջոց, որոնք օգտագործում են դիզելային վառելիք /մնացածը դիզ վառելիք չեն օգտագործում/: Դիզվառեղիքի միջին օրական ծախսը կկազմի՝ 120-180 լ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝  $180 \times 0.835 = 150,3$  կգ/օր:

Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքներին մասնակցելու է ընդամենը մեկ էկսկավատոր և առավելագույնը 10 օր, դիզելային վառելիքի այրման արդյունքում տեղի կունենա չնչին արտանետումներ, այդ պատճառով էլ հաշվարկ չի իրականացվել:

**- Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատում**

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտված դրամական համարժեքով: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային ցուցանիշներով գնահատելու համար:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

**- Մթնոլորտային օդ**

Սույն մեթոդակարգը մշակված է այն նյութերի ազդեցության գնահատման համար, որոնց սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվները գերազանցել են, սակայն հաշվի առնելով, որ նախկին բոլոր մեթոդակարգերը ՀՀ կողմից ներկայացված չեն և չեն գործում, վնասի հաշվարկը կատարված է վերը նշված մեթոդակարգով:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով:

$$U = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \Psi_{i} \Phi_{i} \quad (1),$$

որտեղ՝

U –ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

$\Phi_{q}$  –ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9 աղյուսակի արգելոցների տարածքի համար, որի շարքին դասվում է տարածքը շինարարության իրականացման ընթացքում, ընդունվում 10:

$\Psi_{i}$  –ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, անօրգանական փոշուծ, եռակցման աերոզոլի համար՝ 25, ծծմբի անհիդրիդի համար՝ 16.5, ածխաջրածինների համար՝ 3, պինդ մասնիկների համար՝ 25, մանգանի օքսիդների համար՝ 705:

$\Phi_{i}$  –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

$\Phi_g$ -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է էլնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի

համաձայն  $\Phi_g =$

1000 դրամ:

$\Phi_i$  գործակիցը որոշվում է 2-րդ

բանաձևով՝  $\Phi_i = q (3 S_{U_i} - 2 U\theta U_i)$ ,

$S_{U_i} > U\theta U_i(2)$

որտեղ՝

$U\theta U_i$  -ն  $i$ -րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք մերձգետնայ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես  $U\theta U_i$ :

$S_{U_i}$  -ն  $i$  նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝

տոննաներով  $q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Անջառվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը, դրամ
	$S_i$	$q$	$\Phi_i = S_i \times q$			$U = 1000 \sum \Phi_i$
<b>Անշարժ աղբյուրներ</b>						
Անօրգանական փոշի	0.01	1	0.06	10	10	7

Ներկայացված գումարը արտահայտում է վնասակար նյութերի հետևանքով տնտեսությանը հասցված հարաբերական (բերված) վնասի դրամային արտահայտությունը:

#### 4. ԱՅԼԸՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

##### ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվող գործունեության պլանավորման փուլում դիտարկվել են հետևյալ այլընտրանքային տարբերակները՝

1) Զրոյական տարբերակ, այն է՝ չիրականացնել ջրագծի կառուցումը:

2) ջրագծի կառուցումը իրականացնել վերգետնյա եղանակով:

**- Ջրոյական տարբերակ (նախատեսվող գործունեության չեղարկում)**

Ջրոյական տարբերակի դեպքում աշխատանքային նախագծով նախատեսված գործունեությունը չի իրականացվի: Այս տարբերակը ֆինանսատնտեսական և տեխնիկական իրագործելիության, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից ամենացանկալին է, քանի որ չի պահանջում ֆինանսական լրացուցիչ ներդրումներ և չի հանգեցնում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության առաջացմանը:

**- Ջրագծի վերգետնյա անցկացման տարբերակ**

Այլընտրանքային տարբերակներից մեկն է՝ ջրագիծը անցկացնել վերգետնյա եղանակով: Այս տարբերակը ենթադրում է հետևյալ աշխատանքները/միջոցառումները՝

- Մեծածավալ հողային աշխատանքների իրականացում,
- Էռակցման աշխատանքների իրականացում
- Շինարարական աշխատանքների ընթացքում մեծածավալ մարդկային ռեսուրսների և շին. տեխնիկայի օգտագործում,
- Շրջակա միջավայրի զգալի աղտոտում:

Այս տարբերակը ֆինանսատնտեսական տեսանկյունից թանկ է, իսկ տեխնիկական իրագործելիության տեսանկյունից բարդ: Կատարվելու են մեծածավալ էռակցման աշխատանքներ, որի արդյունքում կլինեն զգալի արտանետումներ, ինչը զգալի ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա: Հետևաբար կարելի է փաստել, որ այս տարբերակը նպատակահարմար չէ իրականացնել:

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի

վրաազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

#### **Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ փոստրակի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

#### **Բնապահպանական միջոցառումն**

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

- Ջրամատակարարման համակարգի կառույցների շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում նախատեսվող, է պահպանել Առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 803 հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

## Մթնոլորտային օդ

Օդային աազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- Շինանյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով կանխարգելելու համար փոշու տարածումը,
- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
- Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումնիրականացնել ծածկված թափքերով բռնատարներով և երթևեկության համար սահմանել երթեր:
- Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

## Աղմուկի և թրթռումների մեղմացման միջոցառում

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով ժայռային հողերի և համապատասխան սարքավորման օգտագործման անհրաժեշտության բացակայությունը:

*Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝*

- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր) հեռավորությունը շինտարածքից:

Աղմուկի մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են բնապահպանական կառավարման պլանի աղյուսակում:



## Հողային ռեսուրսներ

- Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը՝ բերրի հողաշերտի պահպանումն է: Հողի բերրի շերտի կտրումը, տեղափոխումը, պահպանումը և օգտագործումն պետք է իրականացնել, առաջնորդվելով՝ - ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 82 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշմամբ հաստատված կարգով:

## Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել Ստեփանավան քաղաքի մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությանները և հնարավոր ռիսկերը:

- Շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,

- Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Գյուլագարակի համայնքապետարանի հատկացված աղբավայր,

- Ջրընդունիչները կառուցելիս նախատեսվում է առաջնորդվել 2022թ-ի հուլիսի 7-ին ընդունված ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՕ-316-Ն ՀՀ օրենքով, որով ամրագրվել է ջրօգտագործողի կեղմից տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ սարքերի տեղադրման պահանջ՝ ժամկետ սահմանելով 2024թ-ի հունվարի 1-ը,

- Աշխատանքների ընթացքում նախատեսվում է պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2017 թվականի փետրվարի 12-ի թիվ 236-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղակայման արտոնագիր,
- Բացառել բետոնի պատրաստումը շինհրապարակում և այն շինհրապարակ բերել պատրաստի վիճակում,
- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

**Ջրագծի խողովակաշարի անցկացման՝ կառուցման ընթացքում իրականացվելու է հետևյալ հողային ռեսուրսների աշխատանքների նկարագիրը ծավալային գնահատումներով՝**

- Խրամուղու քանդում 3-րդ կարգի գրունտում մեխանիզմով կողլցմամբ՝ 1.365հազխմ,
- Խրամուղու քանդում 4-րդ կարգի գրունտում մեխանիզմով կողլցմամբ՝ 651խմ,
- Խրամուղու քանդում 3-րդ կարգի գրունտում ձեռքով կողլցմամբ՝ 201,6խմ,
